

## ՇԻՆԱՐԱՐ ԳԱՆՉՑՈՒԱԾ ԵՆՔ ԵՒ Ո՛Չ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ

Միջերկրական Ծովուն արեւելեան կողմը կղզի մը կայ, Կիպրոս կը կոչուի:  
Այդ կղզիին մէջ մօտակայ անցեալին հայկական երկրորդական վարժարան մը կար՝ Մելգոնեան կը կոչուէր:

Ո՛վքեր-ո՛վքեր դասաւանդեցին հոն: Ո՛վքեր-ո՛վքեր դաստիարակուեցան հոն:

Աշակերտութեան մեծամասնութիւնը Միջերկրականը շրջապատող երկիրներու հայկական գաղութներէն կու գար: Գիշերօթիկ վարժարան էր, ուսման բարձր մակարդակով: Իր զաւակը Մելգոնեան վարժարանի խնամքին յանձնել ի՛նչ-ի՛նչ ծնողներու փափաքն էր: Մելգոնեանի աշակերտել երանութիւն մըն էր՝ յառաջիկային ըմբռնելի:

Մելգոնեան վարժարանը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան դպրոցներէն մին էր: Սփիւռքի տարածքին վրայ այլազան գաղութներու մէջ մասնաճիւղերու տէր, կտակներ, շօշափելի քանակութեամբ նուիրատուութիւններ ստացող ՀԲԸՄ-ի վարժարան էր: Մելգոնեանը հայապահպանման ամուր բերդերէն մին էր: Իր երդիքին տակ հասակ նետող տղոց մէջ հայու նկարագիր կերտող ուսման օճախ մըն էր:

Օր մը, յանկարծ, այդ պանծալի հաստատութեան դռները փակեցին: Դռները փակեցին ոչ թէ Կիպրոսի մէկ մասը անօրէնօրէն գրաւած ու հայոց Մակարայ Վանքը աւերակի վերածած թուրքերը, այլ՝ ՀԲԸՄ-ի վերին վարչականները:

«Դրամ»-ը ու «հայապահպանում»-ը կշիռքի նժարներուն մէջ դրին: «Դրամ»-ը ծանր կշռեց: Ինչպէ՞ս թէ չկշռէ: «Դրամ»-ը բոլոր դռները բացող միակ բանալին է, իսկ «հայապահպանում»-ով ի՞նչ կարելի է ձեռք ձգել:

Դրամին տէրը եղաւ նաեւ դռները փակող բանալիին տէրը:

Փարիզի «Յառաջ» օրաթերթին փակման լուրին տուած ցնցումէն տակաւին չզգաստացած, շառաչիւն ապտակ մը մեզ զգետնեց:

Այս անգամ անսպասելին, անհաւատալին կը պատահէր հո՛ս, մեր համայնքէն ներս, Թորոնթոյի մէջ: Մելգոնեանի դռները փակողները հիմա ալ Թորոնթոյի ՀԲԸՄ-ի Ջարուկեան վարժարանի դռները փակելու պատրաստութեան սկսած են: Դպրոցը յաջորդ տարի հինգերորդ ու վեցերորդ դասարաններ պիտի չունենայ: Հինգերորդին ու վեցերորդին դռները կը փակուին:

«Յառաջ»-ը յառաջացեալ տարիքի հասած խմբագրապետի մը սեփականութիւնն էր եւ վերջին ութը տարիներու ընթացքին դադրած էր ինքնաբաւ ըլլալէ:

Հապա՞ Բարեգործականը:

Միլիոնաւոր տոլարի հարստութիւն ամբարած Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան միակ բարեգործութիւնը Հայաստանի մէջ մեր կարեկից քոյրերուն եւ եղբայրներուն համար «soup kitchen» բանա՞լն է: Նիւթապէս

ինքնաբաւ ըլլալէ դադրած իր իսկ դպրոցներուն ելեւնտացոյցը հաւասարակշռել ու հայ տղոց հայեցի դաստիարակութիւն ապահովել միթէ ազգային մեծագոյն բարերարութիւնը չէ՞:

Այո՛ հայ դպրոցը ինքնաբաւ ըլլալու չափ կրթաթոշակի եկամուտ եւ այդ եկամուտի աղբիւր՝ բաւականաչափ թիւով աշակերտ չունի: Հայ ծնողքը իր զաւակը հայկական դպրոց չի դրկեր: Չի դրկեր, որովհետեւ անոր միտքը իր զաւակը հայկական դպրոց դրկելու անհրաժեշտութեան հասկացողութեամբ չէ պատրաստուած: Անոնք, որոնք միտքերը պատրաստելու կարելիութիւնը ունին՝ թերթերու խմբագիրներ, եկեղեցիներու հովիւներ, սա կամ նա հաստատութեան կամ մշակութային միութեան վարչականներ, հայապահպանման գործին այնքան կարելորութիւն չեն տար որքան կուտան հասութաբեր ձեռնարկներու կազմակերպման: Չէ՞ որ իրենց ժրաջանութեան չափանիշը տարեվերջի հաշուետուութիւններու ցուցակներուն մէջ դիզուած տոլարի քանակութիւնն է:

Երբ աշակերտութեան թիւի նուազումը բացայայտօրէն ղեկավարութեան յանցանքն է, դպրոց փակելով ապագայ հայութիւնը ինչո՞ւ ձուլման առաջնորդել:

Յունիս 6, 2009

ԼՈՒՍԱԲԱՅ